

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ
ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ. ԱՆՑԵԱԼԸ ԵՒ ՆԵՐԿԱՆ

*Ժիրայր Քոչարեան
Բեռլինի Ազատ համալսարան,
Գերմանիա*

Հայագիտութիւնը Գերմանիայում սկսեց համեմատաբար ավելի ուշ, այսուամենայնիւ ուրիշ ոչ մի երկրում չապրեց այնպիսի վերելք, ինչպէս Գերմանիայում: Յիշենք Անդրեաս Աքոլութուսին (Andreas Akoluthus), որը 1680 թ-ին Լայպցիգում լոյս ընծայեց Արդիէյի Մարգարութիւնը (Propheten Abdias), լատիներէն տառադարձութեամբ եւ քերականական բացատրութիւններով: Եօհան Եօախիմ Շրօդերը (Johann Joachim Schroeder), ուսանելով հայերէն, 1711թ-ին Ամստերդամում հրատարակեց «Գանձ Արամեան լեզուի» (Thesaurus Linguae Armenacae) գիրքը: Շրօդերին կարելի է համարել հայագիտութեան հիմնադիրը Արևմտեան Եւրոպայում, նա նաև առաջինն էր, որ գիտակցեց հայոց լեզւի պատկանելութիւնը հնդկարոպականին:

19-րդ դարի աւարտին երևան եկան մի շարք ակնառու հայագետներ՝ Հայնրիխ Փեթրման (Heinrich Petermann), Վինդիշման (Windischmann), Փաուլ դը-Լագարդ (Paul de Lagarde), Ֆրիդրիխ Միլլեր (Fridrich Mueller), Ֆրանց Բօփ (Franz Bopp) և այլն, և այսուհանդերձ Հայնրիխ Հիւբշմանին էր վերապահուած ասելու վճռական խօսքը. «Հայոց լեզուն հնդկարոպականի ինքնուրոյն ճիւղ է»: Թեպետև այս լեզվաբանները վիթխարի ծառայութիւն մատուցեցին հայագիտութեանը, այսուամենայնիւ նրանք սահմանափակեցին միայն լեզուի (գրաբարի) հետազօտութեամբ: Այս կացութիւնը փոխուեց, երբ արևելագետ Եօզէֆ Մարքւարտը (Josef Marquart) 1864-1890, որը զբաղուեց էր ոչ միայն հայոց պատմութիւնով և բանասիրութեամբ, այլ նաև իր գիտական հեղինակութիւնը ներդնելով, պաշտպանում էր հայ ժողովրդի իրաւունքները և դատելով: Հայոց նշանաւոր այս բարեկամը դատապարտում էր սուլթան Աբդուլ-Համիդի հայահալած և կայսերական Գերմանիայի վարած քաղաքականութիւնը Թուրքիայի նկատմամբ՝ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և դրանից յետոյ էլ:

Ժամանակի սղութեան պատճառով կարելի չէ բոլոր վաստակաւորներին մի առ մի թել, յիշենք միայն մի քանիսի անունները, օրինակ՝ Եօզէֆ Քարսթը (Josef Karst) և իր կոթողական կիլիկեան հայերէնի պատմական քերականութիւնը և նրա դեռ չիրատարական միջին հայերէնի ընդարձակ բառարանը: Քառլ Լեման-Հաուպտը (Karl Lehmann-Haupt) ուսումնասիրական նպատակով 1898-1899 թթ. ուղևորվել է Հայաստան, յատկապէս հետախուզել է Վան քաղաքը եւ շրջակայքը, իր տպաւորութիւններն ամփոփելով երեք հատորանոց աշխատութեան մեջ, որը հրատարակուել է 1910-ին եւ 1926-ին «Հայաստանը երբեմն և այժմ» (Armenien einst und jetzt) խորագրով, որտեղ նա մանրամասնօրէն անրադառնում է սոցիալ-տնտեսական եւ մշակութային փոփոխութիւններին՝ որպէս արդիւնք 1895-1896 թթ. հայոց զանգուա-

ծային կոտորածների: Յիշարժան է նաև Քառլ Ռոթի (Karl Roth) կողմից հրատարակ-
ված «Armenica» հանդէսը, որի, դժբախտաբար, միայն 2 համար՝ 1926-ին եւ 1927-ին
լոյս տեսաւ: Նմանապէս կարճ կեանք ունեցաւ Նիկոլաուս Ֆինքի (Nikolaus Finck),
Յակոբ Մանանդեանի և Եզնիկ Գեանջեցեանի «Յայագիտական հանդէսը»:

Երբ խօսք է ասուում Գերմանիայի հայագիտութեան մասին, պիտի շեշտը դրի
համալսարանական ուսուցմանը: Թէպէտև բազմաթիւ գերմանական համալսարան-
ներում ուսումնասիրել է հայոց լեզուն, սակայն գոյութիւն չի ունեցել և ներկայումս
էլ չկայ մի որևէ հայկական ամբիոն: Եօզէֆ Մարքլարտն առաջինն էր և միակը, որին
յաջողւեց հիմնել իրանական և հայկական բանասիրութեան ամբիոն: Իր մահից
յետոյ, 1930-ին վերացաւ այդ ամբիոնը, ցաւօք սրտի նրա երկերն էլ լիովին չեն
հրատարակուել, նրա չհրատարակած ձեռագրերը պահուում են Զոմմի «Pontifici
Istituto Biblio»-ում եւ սպասում են հրատարակուելուն: Մարքլարտի յետնորդը՝ Զանս
Յայնրիխ Շեդերը (Hans Heinrich Schaefer), որը ղեկավարում էր արևելագիտու-
թեան ամբիոնը, դասաւանդում էր միայն գրաբար և այն էլ ոչ կանոնաւոր:

Դասական կամ գրաբար հայերէն դասաւանդում էին արդէն Զայնրիխ Փետերմա-
նը (Heinrich Petermann) Բեռլինի համալսարանում, Նիքոլաուզ Ֆինքը (Nikolaus
Finck), Մարքուարտը, ինչպէս նաև Շեդերը:

Գերմանական բանասիրական գիտութիւններում նախապատուութիւնը տրւած
էր գրաբարին, որպէս մեռել լեզու, համարժէք լատիներէնին և հին յոյնարէնին:

Գերմանական բանասիրութեան մեջ հայոց լեզուն որպէս կենդանի առարկայ
դիտելու աւանդոյթը մշակել և զարգացրել են հենց իրենք հայերը, որոնցից յատկա-
պէս աչքի է ընկնում Արտաշէս Աբեղեանը, որը դասաւանդել է 1926-1945 թթ., սկզբում
«Արևելեան լեզուների սեմինարում», որը հիմնուել էր 1887-ին Բիսմարքի օրօք և
նրա թելադրանքով, 1936-ին այն վերանանուել է «Արտասահմանագիտական ճե-
մարան», իսկ 1940-ին միաձուլուել քաղաքագիտական ճեմարանի հետ, կազմելով
համալսարանի 8-րդ ֆակուլտետը, որն էլ ընդմիջտ վերացաւ 1945-ին:

20 տարի դադարից յետոյ, 1952 թ. պրոֆ. Գյունթեր Ռայշենքրոնը (Guenter
Reichenkron) Արեւմտեան Բեռլինի նորաբաց Ազատ պետ. համալսարանում վերակ-
սեց հայերէնի դասավանդումը: Ինձ նախորդել է դոկտ. Պետրոս Ֆրունջեանը՝ մաս-
նագէտ արևմտահայերէնի եւ գրաբարի: Այդ ժամանակահատից ի վեր հնդկարկայական
եւ համեմատական լեզւաբանութեան սեմինարում կանոնաւոր եղանակով տեղի
են ունենում դասախօսութիւններ՝ ըստ մասնակիցների պահանջի գրաբար կամ աշ-
խարհաբար, արևելա- կամ արևմտահայերէն:

«Յնդկարկայական լեզ. ընկերութեան» կիսամեայ տեղեկատուի համաձայն որպէս
համեմատութիւն բերուում է հետևեալ վիճակագրութիւնը. 2003 թ-ի ամառային կի-
սամեակում Եւրոպայի 2 երկրների 7 համալսարաններ, ինչպէս նաև Լոս-Անջելոսի
համալսարանը իրենց դասացուցակներում ունէին հայերէն, որոնք տեղի են ունե-
նում հնդկարկայական եւ համեմատական լեզւաբանութեան շրջանակում՝ շաբաթա-
կան 1 անգամ եւ միայն գրաբար: Կշարունակուե՞ն արդեօք այդ դասախօսութիւն-
ները յաջորդ կիսամեակում, դեռևս հարցական է: Բացառութիւն են կազմում Բեռլին-
ի Ազատ, ինչպէս նաև Կրակովի համալսարանները, որտեղ դասախօս է մշանակ-
ուել իմ նախկին աշխատակից դոկտ. Ռալֆ-Փետրը Ռիթերը (Ralf-Peter Ritter), որը
դարձել էր Բեռլինի Ազատ համալսարանի ֆինանսական կրճատումների գոհը:

Շատ բան փոխուեց այս վերջին 14 տարիների ընթացքում՝ Գերմանիայի վերա-
միաւորումից և Զայաստանի անկախութիւնից յետոյ: Ոմանց ոգևորութիւնը չարդա-
րացաւ, ընդհակառակը. այդ նահանջը եւ կամ լրիւ դադարումը կարելի է նկատել
հայերէնից գերմաներէն թարգմանած թարգմանական հրատարակութիւններից: Գերմանական Դե-
մոկրատական Զանրապետութեան օրօք, այդ երկրի մշանաւոր հրատարակչութիւն-
ները տարեկան թարգմանաբար լոյս էին ընծայում ծաղկաքաղեր գրականութիւ-

նից և քնարերգութիւնից, թէպէտև յաճախ ոչ ուղղակի հայերէնից, այլ ռուսերէնից
թարգմանած, ինչպէս նաև մասնագիտական գրքեր՝ արւեստ, ճարտարապետու-
թիւն, մանրանկարչութիւն եւ այլն: Գերմանիայի վերամիաւորելուց յետոյ էլ որևէ
գիրք հայ գրականութեան մասին չի հրատարակուել:

Վերստին խօսենք Բեռլինի Ազատ համալսարանի մասին, որտեղ հայերէնն իր
հիմնման օրից ի վեր ունի մնայուն աւանդոյթ: Գերմանախօս երկրներում և հաւա-
նաբար համայն Եւրոպայում, Ազատ համալսարանը միակն է, որտեղ անընդհատ
հայերէն է դասաւանդուում: Գալիք, ձմեռային 2003/2004 կիսամեակում ունենալու է
շաբաթական 4 առարկաներին նւիրած 118 ժամ՝ հետևեալ կարգով.

- ա) աշխարհաբար, ըստ պահանջի, արևմտա- կամ արևելահայերէն
- բ) արևմտահայերէն, արևելահայերէն: նմանութիւններն ու տարբերութիւննե-
րը՝ բառապաշար, քերականութիւն և հնչիւնաբանութիւն,
- գ) գրաբար,
- դ) հայոց գրերի ստեղծումը, պատմական հանգամանքներն ու մշակոյթային
հետևանքները,
- ե) ինչպէս նաև Քրիստոֆ Քոխի (Christoph Koch) Եզնիկ Կողբացու «Եղծ ա-
ղանդոցը», պատմալեզուական մեկնաբանութիւններով,

Պէտք է նշել, որ թէ անցեալ կիսամեակի (2003) եւ թէ գալիք ձմեռային կիսա-
մեակի դասախօսութիւնները տեղի են ունեցել և պիտի ունենան անվճար:

Տարիներ շարունակ ոչ մի գիրք չի գնուել Սեմինարի հայկական բաժնի գրադա-
րանի համար: Մենք ենթակայ ենք խնայողական միջոցառումին, որը ներկայումս
կիրառուում է Ազատ համալսարանի նկատմամբ:

Որպէս դասախօս եւ պատասխանատու կանգնած եմ երկընտրանքի առջև՝ մեր-
ժել անվճար դասախօսելը, թե յանուն հայագիտութեան աւանդոյթին շարունակել
աշխատանքը: Միգուցէ հայկական բաժնի գրքերն ու մամուլի հաւաքածուն էլ զօ-
հաբերի խնայողական ձեռնարկին՝ ենթարկի ցրման ու մասնատման: Սեմինարը
մեծ չէ, տեղի նեղութիւն կայ, միւս բաժնիներն արդէն սպասում են այդ առիթին:

Մտածելով ապագայի մասին՝ կռահում եմ, որ էլ երբեք չի լինի, ինչ անցեալում
էր: Գուցէ Ազատ համալսարանում, ինչպէս պարագան է միւս համալսարանների,
ժամանակ առ ժամանակ հնդկարկայական կամ համեմատական լեզւաբանութեան
շրջանակում շաբաթական մէկ անգամ գրաբար մատուցի: Այս ու վերջ:

Դոկտ. Թեսա Զոֆմանի (Tessa Hofmann) օգնութեան ճիշ-յօղածը երևանեան
«Ազգ»-ում, ինչպէս նաև Զամօ Պետրոսեանինը Փարիզի «Յառաջ» օրաթերթում մնա-
ցին անարձագանք: Բեռլինի Ազատ Զամալսարանի հայագիտութեան բաժինը չստա-
ցաւ որևէ տնտեսական հովանաւորութիւն:

Երբ խօսուում է Գերմանիայի հայագիտական հեռանկարի մասին, ես պատկե-
րացնում եմ մի հայագիտական ամբիոն, որտեղ դասաւանդուում է հայագիտութիւն,
ինչպէս նաև ուսումնասիրում և հրատարակում են բանասիրական և հնարաւո-
րին չափ գիտամշակոյթային երկեր:

Գիտամասնագէտները առկայ են՝ դոկտ. Ռալֆ-Փետրը Ռիթերը, Քրիստով Քօխ, Ռու-
դիգեր Շմիթ (Ruediger Schmidt) և այլն, որոնք պատկանում են համեմատական լեզ-
ւաբանութեան ոլորտին, Թեսա Զոֆմանը, մարքուարդեան աւանդոյթին հաւատա-
րիմ, միաձուլել է գիտական եւ մարդասիրական իր նւիրածութիւնը՝ այդ ապացու-
ցելով իր մինչև այժմ հրատարակած 14 գրքերով: Նա ոչ միայն միջազգային ճանա-
չում գտած հայոց պատմութեան և ներկայիս քաղաքական անցուդարձի գիտակ է,
այլ նաև հմուտ մասնագէտ հայ մշակոյթի: Վերջապէս մոռացութեան չպիտի տրվի
Զայաստանում լաւ պատրաստուած հայագիտական բոլոր մարզերի մասնագէտնե-
րին: Ուսանող-ուսանողուհիներ էլ այս միջոցին բաւական կան: Եւրոմիութեան երկր-
ներում ներկայումս ապրում են շուրջ 600.000 հայեր և դեռ բազմաճաւու միտումով:

Ուսանողներ են գալու ոչ միայն եվրոմիութան երկրներից, այլ նաև Մերձավոր Արևելքից: Նրանք բերելու են տեղեկություն իրենց երկրներից և համայնքներից, որոնք նորանոր նաճումների խթան են հանդիսանալու, այնպես որ հայագիտությունը Գերմանիայում հասնելու է 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի մակարդակին:

Այսուամենայնիւ գլխավոր խնդիրն այն է, թէ ո՞ր մէկ համալսարանն է պատրաստ հիմնելու հայկական ամբիոն է ինչու՞, չէ որ այսպէս կոչւած շուկայական պայմաններում խօսուում է այն մասին, թէ «ինչը որ շահաբեր լինի, գոյութեան իրաւունք կունենայ»: Արդե՞օք որևէ համալսարան հետաքրքրւած է հայագիտութեամբ, թէ սա միայն հայերի ցանկութիւնն է:

Ցաւով տեղեկացայ (բացակայում էի, Արցախ էի գնացել), թէ Գարեգին Ա կաթողիկոսի Բեռլին կատարած այցելութեան ժամանակ պատասխանատու յանձնախումբը զլացել էր Ամենայն Յայոց կաթողիկոսին մատնանշել Ազատ համալսարանի հայագիտական բաժինը, ինչպէս նաև նրան հայագիտական ամբիոնի անհրաժեշտութեան մասին տեղեկացնել: Պատեհ առիթ էր, քանի որ գերմանական կողմը պատրաստ էր ընդառաջել որևէ հայկական խնդրանքին, յատկապէս որ Յայաստանի Յանրապետութիւնը վերադարձնում էր Գերմանիայի համար մշակոյթային անսահման արժէքավոր 600-ի չափ ձեռագիր և հնատիպ գրքեր, որոնք Սովետների կողմից որպէս աւար տարւել էին Ռուսաստան:

Դժբախտաբար առիթը չօգտագործւեց Ազատ համալսարանի հայագիտական բաժնի դասաւանդումներն ապահովելու եւ ընդարձակելու, ինչպէս նաև բանակցութիւն վարելու, հայագիտական ամբիոնը վերաստեղծելու համար:

Այս բոլորը հաշւի առնելով մնում է միայն մի ելք՝ ինքնաֆինանսաւորում, ինչպէս դա արւում է Միացեալ Նահանգների մի քանի համալսարաններում: Աշխարհում բացառութիւն է կազմում միայն Իսֆահանի համալսարանը, որտեղ այդ պետական համալսարանը հայագիտական ամբիոն ունի:

Նոյն վրիպումը կրկնւեց գուցէ այս տարւայ (2003) փետրւարին, երբ Յայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարեանը Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրեյդերի հրաւերքով գտնւում էր Բեռլինում:

Այս միջոցին, յոյսով են, որ բոլորս գիտակցում ենք, որ մի հայագիտական ամբիոն որևէ համալսարանում զուտ գիտական կառոյց չէ, այլ նաև քաղաքական հանգամանք, գիտական առկայութեան հարց: Ամբիոնը ներկայացնում է մշակոյթ, ազգ, պետութիւն:

Եւ դարձեալ բիրեղանում է կարևորագոյն հարցը, ո՞վ է Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում հայագիտական ամբիոնի ֆինանսաւորման հոգսը իր վրայ վերցնում: